

ՄԵԼԻԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԵՐԵՎԱՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“. Կամ Tiflis, Rédaction „Mschak“. Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տ է Լ է Ֆ օ ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զօրքի պաշարը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Շուշու. — ՆԱՄԱԿ Փարպից. Նամակ Կողբից. — ՆԵՐՔԻՆ ՆԱՄԱԿ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Պատերազմի շուրջը. — ՆԱՄԱԿ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Ֆրիդրիխ Բաղդէլ.

ԶՕՐՔԻ ՊԱՇԱՐԸ

Պատերազմի տևողութեան հետ կապված են ծախքերի հոգսերը: Թէ որքան մեծ են ուսումնական զորաբանակի ծախքերը երևում է «P. M.» թերթի մէջ բերված տեղեկութիւններից, որոնց հետ կը ծանօթացնենք մեր ընթերցողներին: Դա կարևոր է մանաւանդ, որ զօրքերի թիւը օրէնցօր աւելի ու աւելի մեծանում է:

Բաւական է արձանագրել, որ ներկայումս իւրաքանչիւր օր զօրքի համար պահանջվում է 12,000 պուդ ալիւր, 1300 պուդ կրակաւ, 32,000 պուդ խոտ և այլգրան էլ հացահատիկ, դրանց աւելացրէք միւսը, թէլը, շաքարը: Այդ բոլոր քանակութիւնը պէտք է ձեռք բերել, փոխադրել մինչև կենտրոնական կէտերը, ուղարկել զանազան տեղեր և բաժանել զօրամասերին: Իսկ զօրքը մի տեղում չէ կանգնած, նա շարժվում է անդադրաբար:

Ամենամանրամասն պիտոյը, հացը, շատ դժուարութեամբ է տեղ հասցնում: Նա շատ շուտ փչանում է: Բաւական է, որ մի տեղ երկաթուղու գնացքը կանգ առնի, հացը սկսում է բորբոսանալ և ներսից փչել: Այդ պատճառով գերադասութիւն է տրվում չորացած հացին կամ սուխարին: Սակայն սրա պատրաստելը աշխատանք է պահանջում: Ինտենզիւմի գնեցողը կարողացել է օգնականներ գրտ-

նել չինացիներից և հայերից, որոնք վառարաններ են շինել և չորացնում են հացը: Մշտական պէտք է ունենալ պատրաստ մինչև 350,000 պուդ սուխար: Մանջուրիան ինքը կարողանում է տալ բաւականաչափ հացահատիկ և ալիւր: Իսկ պահանջվում է շատ մեծ քանակութիւն: Եւ պաշարների փոխադրութեան համար մշտական աշխատում է 30,000 ջորի և ձի: Ինչ վերաբերում է միւս, նա ձեռք է բերվում Մանջուրիայում. բացի այդ Մոնղոլիայում էլ պատուիրված է 50,000 գլուխ ապրանք և հարկը հազար պուդերով բերվում են աղած միս, չորացրած ձուկ, և ուրիշ նիւթեր Միքիթի զանազան տեղերից:

Մենք առաջ չենք բերում այն թւերը, որոնք վերաբերում են հագուստեղէնին, որի հոգսը ամենաէական և կարևորն էր: Եւ պատերազմական դաշտում, մանաւանդ, երբ զօրքը գործ ունի անձրեւի, հեղեղների հետ, իսկ շուտով պէտք է սկսի դիմադրել աշնան ցրտերին:

Միջոցների փոխադրութիւնը, որ այժմ կանոնաւորված է, նպատակ ունի յարմարութիւններ ստեղծել պատերազմող զօրքի համար, մանաւանդ, որ յայտնի չէ թէ որքան ժամանակ կարող է շարունակվել պատերազմը: Զօրքի մասի հոգսը կլանում է մեծ ուշադրութիւն, աշխատանք և ծախքեր, որոնց համար պետութիւնը և ինտենզիւմային վարչութիւնը ձեռք են առել ամեն միջոցներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Մ Մ Ո Ւ Լ

Տեղական «Շարքը-Ռուս» թիւրքական կամ, ինչպէս ինքն է անուանում իրան, «թաթա-

րապէս կենդանարանութիւնը: Նրա դիտարկողի յիշումը հէնց կենդանարանութիւնից էր ընտրված: 60-կան թուականներին Րատցէլը նշանակվից նացիոնալ-լիբերալների գլխավոր օրգան «Kölnische Zeitung»-ի համար ճանապարհորդական թղթակից: Հէնց այդ ժամանակին են վերաբերում նրա այն մի շարք երկասիրութիւնները, որոնց բովանդակութիւնը կազմում են զանազան երկրներից ստացած ճանապարհորդական նկարագրութիւններն ու տպաւորութիւնները: Այդ պաշտօնում Րատցէլը մնաց մինչև 70 թուականը, երբ ծագեց ֆրանս-պրուսական պատերազմը, որին մասնակցեց և չորսինիստ Րատցէլը և արժանացաւ մի քանի շքանշանների: Պատերազմը վերջանալուց յետոյ Րատցէլը տեղափոխվեց Միւնխեն, որտեղ երկու տարի շարունակ պարապեց աշխարհագրական և գեօլոգիական ուսումնասիրութիւններով: 1872 թ. «Köln. Zig.» լրագրի առաջարկութեամբ նա գիտնական նպատակով ճանապարհորդեց և տեղի ու տեղը ուսումնասիրեց Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները, Մեքսիկան և արեւմտեան Հնդկաստանը: Վերոյիշեալ երկրների մասին Րատցէլի հրատարակած աշխարհագրական-երկրաբանական ուսումնասիրութիւնները գիտնական տեսակէտից դարձաւ իւր կազմողը. 1876 թ. Րատցէլը ուսուցչապետի պաշտօն ստացաւ Միւնխենի բազմաբնակեցութեան բարձրագոյն դպրոցում և իրան վերջնականապէս գիտնական լուրջ գործունէութեան նուիրեց: Վերջապէս 1880 թ. Սաքսոնիայի կառավարութիւնը նրան հրաւիրեց բունդու Լայպցիգի համալսարանի աշխարհագրութեան ամբիոնը, որը հռչակաւ Օսկար Պէշլի մահով թափուր էր մնացել: Այդ պաշտօնում Րատցէլը մնաց մինչև իր կեանքի վերջը:

Ինչ վերաբերում է Րատցէլի գիտնական երկերին, դրանց թիւը շատ և շատ է: Նա բացի իր մեծ գործերից, գերմանական գիտական զանազան հանդէսներում գետնդել է բազմաթիւ գրութիւններ, որոնց թիւը հազար

րական» լրագրի մէջ վերջերս սկսել են տպվել մի շարք յօդուածներ և թղթակցութիւններ, որոնց վրա անկարելի է ուշադրութիւն չը դարձնել. այդ յօդուածները և թղթակցութիւնները հետզհետէ ընդորոշում են լրագրի ուղղութիւնը և հայեացքները:

Կրօնական հարցերը բաւական մեծ տեղ են զբաղում թաթաքական թերթի մէջ: Մենք ընդունում ենք, որ այդ լրագիրը յաճախ ստիպված է զբաղվել կրօնական հարցերով, որովհետև նա հրատարակվում է մի ժողովրդի մէջ, որ ղեկ շատ աղօտ գաղափար ունի ազգայնուծութեան մասին, որ իրան ճանաչում է միայն իրեն մի կրօնական ժողովուրդ, որի համար կրօնից բացի ուրիշ հարցեր չը կան, ուրիշ աշխարհայեացքներ գոյութիւն չունեն, որը չը գիտէ զանազանի «թաթաք» և «մուսուլման» խօսքերը: Զարգացման այդպիսի նախնական աստիճանի վրա կանգնած մի ժողովրդի մէջ հրապարակախօսական գերը շատ դժուար է. բայց հէնց այդ դժուարութիւնը հանգին և ծանր պատասխանատուութիւն է դնում այն օրգանի վրա, որ հրապարակ է գալիս այդպիսի մի ժողովրդի մէջ «մէդանիթ» և էլմ» (բաղադրակրթութիւն և գիտութիւն) տարածելու յաւակնութեամբ: Այդպիսի օրգանը պէտք է հստակութիւն ունենայ, առանց վիրաւորելու ժողովրդի կրօնական զգացումները, ցոյց տալու նրան, թէ ֆանատիկոսութիւնը, կրօնի աւանդական կարգերի և արաբողութիւնների մէջ յետնադոյն ժամանակներում տղէտ մօլլաների և ախունդների ձեռքով մտցրված կանոնները, որոնք հակառակ են գիտութեան և առողջ դատողութեան տարրական պահանջներին, չեն կարող երբէք նսեմացնել կրօնի էությունը, եթէ հեռացվեն իրեն աւելորդապաշտութիւնները: Եւ սակայն «Շարքը-Ռուսը» բոլորովին այլ ուղղութեամբ է վարվում, նա չափազանց մեծ տեղ է տալիս զանազան մօլլաների և ախունդների գրութեան

թէ կարելի լինի հաշել: Դրանցից ամենանշանաւորն է «Wandertage eines Naturforschers» (Մի քննադէտի ճանապարհորդական օրերը), որ հրատարակվել է 1873/74 թւին և գրվել է Գիօնի լրագրի պատուիրով: Բատցէլի գիտական մեծ արժէք ունեցող գործերը մեծ մասամբ վերաբերում են նոր աշխարհին՝ Ամերիկային, որոնք գլխաւորապէս հիմնված են բնական գիտութիւնների վրա: Առհասարակ Րատցէլի գիտնական ծառայութիւնը կայանում է նրանում, որ նա շարունակեց իր հռչակաւոր նախորդների (Հումբօլդ, Բիտտէրի, Պէշլի և այլն) սկսած գործը և նորանոր փաստեր աւելացրեց աշխարհագրութիւնը բնական գիտութիւնների հիման վրա ուսումնասիրելու: Այդ ուղղութեամբ նա լոյս ընծայեց «Städte und Kulturbilder aus Nord—Amerika» (Քաղաքների և կուլտուրական պատկերներ Հիւսիսային Ամերիկայից) 1878/80թ. «Aus Mexika» (Մեքսիկայից) (1878) և «Die Vereinigten Staaten von Nord Amerika» (Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները) երկհատոր աշխատութիւնը 1878/80 թւին: Վերջին աշխատութիւնը կազմում է Րատցէլի գրեթէ գլուխ գործոցը, և շատ հետաքրքիր է նրանց համար, որոնք ուզում են ուղիւստուսի այն կողմում գտնվող Միացեալ Նահանգների գօրծ հասարակագիտութեան քաղաքական և տնտեսական զարգացումն ուսումնասիրել և հասկանալ: Գիտական մեծ նշանակութիւն ստացաւ և Րատցէլի արած ծառայութիւնը «Մարգալաշխարհագրութիւն» (Antropogeographie) համար: Այս գիտութիւնը, որի նպատակն է ազգերի պատմութեան ուսումնասիրութեան համար գործադրել աշխարհագրութիւնը, իսկապէս Րատցէլի ստեղծած գիտութիւն է, որ երկրի վրա ծայր է և իրեն մարդու բնակութեան և դաստիարակութեան տեղը: Այս ծառայութեամբ Րատցէլը շարունակեց իր մեծ նախորդ Կարլ Րիտտերի գաղափարը և նորանոր փաստերով աւելի կա-

նորին, որոնք, թաթաքական թերթը նկատում են մի բզան իրանց կրօնական, կամ աւելի ճիշդն ասած, ֆանատիկոսական հայեացքները քարոզելու և աւելի ամբացնելու թաթաք ժողովուրդը նախապաշարմունքների, նեղ-կրօնական և մոլեռանդ գաղափարների մէջ: Օգոստոսի 11-ի համարում (№ 30) նա մօտ չորս սիւն տեղ է նուիրել լրագրի մէջ բացատրելու համար դուրանից և այլ կրօնական գրքերից բերած վկայութիւններով, արաբական ցիթադներով, թէ արդեօք մուսուլման կինը պէտք է երեսը քօղով ծածկէ օտար մարդուց թէ ոչ: Եւ «բաղադրակրթութիւն ու գիտութիւն» սերմանելու յաւակնութիւն ունեցող թաթաքական լրագիրը կարծէք մի նոր և երեւի զիւտ արած լինի, երբ, իբրեւ կրօնագիտութիւն արաբական բանբով և վկայութիւններով համեմատել իր ուսումնասիրութեան, ուրախ-ուրախ աւանում է, թէ «կնոջ երեսին մի անգամ նայելը կարելի է, իսկ երկրորդ անգամ նայելը հարած է»:

Ուրեմն, քրիստոնեաներ, իմացէք, որ մուսուլման կնոջ երեսին նայելը հարած է—ահա ինչ է քարոզում Մահմէդ աղա Շախտախտիսկին: Եւ միթէ այդ ճշմարտութիւնը ասելու համար նա եկաւ Պարսիցից:

Սակայն միայն տղիտութիւնը չէ, որ ապաստան է գտնում «Շարքը-Ռուս» թերթի մէջ: Մնապարծութիւնը ևս իր փառաւոր տեղն է գրաւում նրան սիւնեակների մէջ: Օգոստոսի 10-ի համարում (№ 129) նա տպել է մի նամակ Աստրախանից, որի մէջ ասված է en toutes lettres, թէ Մահմէդ աղա Շախտախտիսկին, գիտէր ով է... ինքն Արիսթուն, այսինքն իմաստուն Արիստոտէլ (մահմադականների մէջ Արիստոտէլը իմաստութեան մարմնացումն է), իսկ նրա «Շարքը-Ռուսը»—այն մեծ հայելին, որ Արիստոտէլը շինել էր և գրել մի մեծ սարի գագաթին, որպէս զի

տարեկապօրեց ու հարստացրեց: «Մարգալաշխարհագրութիւն» խօսքը ստեղծել է Րատցէլը և իսկապէս աշխարհագրական գիտութեան մի նշանաւոր և հետաքրքիր ճիւղն է դարձրել: Այդ ճիւղի ուսումնասիրութեան է վերաբերում նրա «Antropogeographie» և «Politische Geographie» (Քաղաքական Աշխարհագրութեան) աշխատութիւնները: Վերոյիշեալ երկու գործերը աշխարհագրական գիտական գրականութեան կլասիկական արդիւնների շարքին են պատկանում: Վերջին երկու գործերով Րատցէլը ցոյց տուեց, որ աշխարհագրութիւնը իբրեւ գիտութիւն պէտք է հիմնել ոչ միայն բնական գիտութիւնների, այլ և պատմութեան վրա: Նրա կարծիքով մարդ և աշխարհ գաղափարներ սերտ կերպով կապված են միմեանց հետ և մէկի միւսի օգնութեամբ պէտք է հասկանալ: Հետեւապէս աշխարհագրութիւնը պէտք է լուսաբանել բնական գիտութիւններով և պատմութեամբ:

Րատցէլի ազգագրական գործերից նշանաւոր է նրա «Völkerkunde» (Ազգագրութիւն), մեծ աշխատութիւնը, յետոյ «Die Erde und das Leben» (Երկիրը և կեանքը), որոնք հիմնված են մարդա-աշխարհագրութեան վրա: Բացի այդ գործերից Րատցէլը ունի և «Deutschland» (Գերմանիա) վերնագրով աշխատութիւնը, որտեղ ամփոփված է Գերմանիայի աշխարհագրութիւնը իր հիմնական գծերով:

Իբրեւ մարդ Րատցէլը պատկանում էր այն մեծ մարդկանց շարքին, որոնք միշտ մտածում են միայն Գերմանիայի և նրա շահերի մասին: Մասնաւորապէս յարգելի չէ Րատցէլի կարծիքը՝ հայերի մասին, մի բան, որ գլխաւորապէս նրա անձնաթուղթիւնիցն էր բերվում:

Րատցէլի մահով աշխարհագրական և ազգագրական գիտութիւնները մի անփոխարինելի և մեծ կորուստ ունեցան:

Լ. Բաբայան

Թիֆլիս.

իր աշակերտ Ալեքսանդր Մակեդոնացին հա-
րիւր մըն տեղ տորածութեան վրա տեսնէ
աշխարհի մէջ անցած-դարձածը ու շարժում-
ները: Հաւատարմացն էր, որ «Շարքը-Ռուսը»
մի հայելի է, ուր ֆանտաստիկոս ժուռուժանները
տեսնում են իրանց ցանկացածը, բայց եթէ
Շարքը-Ռուսը չի տեսնուել է, այդ մասին
պատմութիւնը լռում է...

«Բազմավէպ» ամսագրի այս տարվայ մայի-
սի համարում սկսել է տպւիլ մի հետաքրքիր
յոգուած «Յիշողութիւններ Ներսէս Ե. կաթո-
ղիկոսի կեանքից» վերնագրով: Ներսէս Աշ-
տարակցու բազմաթիւն և եռանդուն գործու-
նէութեան հետ ծանօթանալ ցանկացողներին
խորհուրդ կը տայինք կարդալ այդ ուղագրաւ
յիշատակարանը:

ՆԱՄԱԿ ԾՈՒԾՈՒՑ

Օգոստոսի 3-ին

Վերջերս տեղի են ունենում «Մանկական
տուն» անունով երեկոյթներ Պանդոսի բնակի-
չներին, ղեկավարութեամբ զերասան պ.
Արեւիկայի:

Իբրեւ մանկավարժուհի, ինձ հետաքրքիր էր,
թէ ինչպէս են կատարւում այդ «տոները»,
ուստի ներկայ եղալ երեկոյթներէ մէկին, որը
տեղի ունեցաւ յուլիսի 22-ին:

Ծրագրերը ներկայացնում էր մի քանի, ուր
մտնում էր և զարգացնող խաղեր, և ներկայա-
ցում (կերպ-կերպ) և կենդանի պատկերներ, և
վերջն էլ «ճիւղաբարձ» պիտի կատարէր պ. Ա-
րեւիկայ: Այսքան բան տալ երեկոյթին մի ե-
րեկոյթում ու սաստիկ յոգնեցնել նրան, դա
անհնարին յանցանք է:

«Մանկական տուն» սկսվեց երեկոյեան ժա-
մը 5-ին ու տեղի մինչև գիշերվայ 11-ը:

Մտնում էր դահլիճը և ինչ է հանդիսա-
նում ձեր աչքին. խառն ամբողջ, որի մի մա-
սը կարգում է տեղական պարսիկ ժողովրդի
հասարակ դասը, դրանց հետ էլ երեկոյեան
բաղձութիւնը, սկսած ծծկերից:

Դահլիճն ու նախասենեակը, ուր հաւաքվել
էր այդ հասարակութիւնը, օդը վաղուց դառել
էր անտանիկ՝ փոշուց ու շնչառութիւնից: Եւ
այդ օդում դեռ պիտի խաղային, պարէին ու
այտապիտակ երեկոյեան են հոգնական ու ֆիզի-
քական դուրսնութիւն պատճառով երեխաներին:

Երաժշտութիւնը սկսեց նուազել պարերը,
ժողովուրդը խնայեց միասին մի փոքր տա-
րածութիւն թողնելով պարերի համար, որ
մի երկու երեխայ շարունակ պարում էին,
իսկ ամբողջ մեծամասնութիւնը երեխաների
զլխակեր նայում առանց մասնակից լինելու:
Զը կար ոչ մի ղեկավար, որ պարերը ընդհա-
նուր դարձնէր:

Պարերին փոխարինեց ներկայացումը, որի
ամբողջ ընթացքում երեխաները կանգնած
մնացին, աթոռ չը լինելու պատճառով: Դա-
լիճում շարունակ լսելի էր յոգնած երեխա-
ների տրտմանը և ծնողները ստիպված էին
գրկել:

Ներկայացումից յետոյ դարձաւ պարեր,
պարում են նոյն առավելապարողները, յետոյ
կենդանի պատկերներ նոյն տեսիլքով երեխա-
ներից կազմված և այսպէս մէկը միւսին փո-
խարինելով «երեկոյթը» տևում է մինչև գի-
շերվայ 11-ը:

Այս բոլորից յետոյ, նայում էր ձեր շարքը
ու տեսնում միայն յոգնած ու տխուր մանկա-
կան գէգեր, որոնք վաղուց կը ցանկային
հանգստանալ իրանց անկողիններում, բան
մնալ այդ խնդրող օդի մէջ, ուր ոչ մի բաւա-
րանութիւն չը ստացան:

Արդեօք ինչ է մտածում պ. ղեկավարը, որ
«մանկական տոները» կատարում է գիշերնե-
րը, երբ այդ ժամանակ մասնակցը վաղուց քն-
նած պիտի լինէր ու հանգստացած իր գիշեր-
վայ խաղերից:

Ո՞ր մանկավարժութիւնը թոյլ է տալիս և-
րեխային այդքան երկար ժամանակ պահել
խնդրող օդի մէջ ու կանգնեցնել թէ հոգնալէս
և թէ ֆիզիքայէս (5-ից մինչև գիշերվայ 11-ը
ժամը...):

Վերջապէս աններկի յանցանք է սարբել
«զարգացնող խաղերը» փակված սենեակներում,
այն էլ ամառ ժամանակը: Արդեօք ինչ կը
նշանակէ «զարգացնող խաղեր», ինչու համար
են և ինչպէս են զբոլում դրանք—մտածել է
պ. ղեկավարը, որ պատճառ է դառնում ահա-
գին թուլ երեխաներին հաւաքել փոքր սե-
նակներում, որը միանգամայն հակառակ է
մանկական կրթութեան: Ինչո՞ւ չօգտվել Շու-
շու գեղեցիկ ընտելութիւնը ու սարբել այդ խա-
ղերը առաւօտեան, մաքուր, բաց օդում, որով

երեխաները մեծ բաւականութիւն ու թա-
րամաքիւն կը ստանային:

Ահա սարակ կազմել «մանկական տոներ»
պատասխանատու գործ է, դժբախտաբար
ղը պէտք է հմուտ մանկավարժ լինի, որ լը-
նութեամբ վերաբերվի, հակառակ դէպքում
միայն ֆլաւ ու ֆլաւ կարող է հասցնել երե-
խային:

Ցանկալի է, որ անձեռնառ մարդիկ ղեկա-
վար չը հանդիսանային, մանկական կրթու-
թեան գործում, իսկ շուշուի մայրերը ունե-
նային այնքան զարգացում, որ գիտակցաբար
վերաբերվին երեխաների կրթութեան ու չը
խրախուսէին այսպիսի «մանկական տոներ»
իրանց ու երեխաների այցելութեամբ,

Ս. Ղուկասեան

ՆԱՄԱԿ ՓԱՐՊԻՑ

Փարպի, յուլիսի 15-ին

Ահա տարւ տարուց աւելի է, որ Աշտարա-
կում գտնվում է պետական հիւանդանոց, բայց
չը ճակայքի ժողովուրդը այնքան էլ հաւատ չէ
ընծայում այդ մարդասիրական հաստատու-
թեան: Եւ շատ անգամ եմ լսել գեղացի կա-
նանց բերանից հետեւալ արհամարհական խոս-
քեր: «Հողեմ գոխտուրի գլուխը, թէ նա բան
ս հասկանում»: Մի սարսափելի բան ևս
նրանց մէջ կայ մի կարծիք, իբր թէ բժիշկ-
ները շատ անգամ բարեկանում են և դիտմամբ
մոռնում հիւանդին: Այս առաջ է գալիս նրա-
նից, որ ժողովուրդը ընդունակ չէ քննադա-
տական աչքով նայելու մի որ և է երկոյթի
վրա, ուստի երբ բժիշկ մօտ տարած հիւանդ
մեռնում է, որ լինում է ոչ սակաւ, նրանա-
կում է բժիշկն է մեղաւորը: Բայց ահա պատ-
կին իրանց գեղերով բժշկել, երբ հիւանդու-
թիւնը ծանրանում է, տանում են իրանց մէջ
յայտնի հիւանդ մօտ, որը տգիտաբար ֆլա-
սակար գեղեր տալով հիւանդի դրութիւնը ա-
ւելի վատթարացնում են և երբ հիւանդու-
թիւնը ծանրանալով սպառնում է մահ, այն
ժամանակ եւս դիմում են բժշկին, բայց ար-
դէն բանը բանից անցած է լինում և բժշկի
գեղերը անզօր են լինում հիւանդի ֆլաւածնե-
րը առողջացնելու: Մասնաւոր բժշկին դիմե-
լու հակառակ են հերիքները, պատճառները,
որոնք ժողովրդին խաբելով օգտվում են, նը-
րանք շատ անպատշաճ, սուտ լուրեր են տա-
րածում: Միայն ինչ է բժիշկները մասին:
Մեր գիւղում մի քանիսը կան զբոսայից, բայց
ամենանշեկանաւորն է մեր հարեան գեղացի
մի թուրք մաշայի, որը իբր թէ վերաբոյժ է
և հէց այժմ երկուսին տանջում է իր սու-
լէյմանիքով:

Իսկ սէլիդները... օհ... նրանք իմաստուններ
են և մեր ժողովրդի մօտ նրանց մասին ան-
նպատակ խօսելը անհաւատութիւն է համար-
վում: Նրանք բժշկում են ընկաւորներին,
չբեր կանանց զաւակի տէր են դարձնում,
սիրահարվածներին իրանց մօրաղին են հաս-
նում: Եւ շատ եմ տեսել թէ ինչպէս աշտա-
րակցի կինը եւրօպական շորերի տակ շապ-
կից կապած ունի Ուշու մօլլի գիրը, կամ
ինչպէս փարպիցի իր կօպէկներն է տալիս
թաքնու սէլիդին և խնդրում իրան ցաւին մի
պարսիկ անի՛ ի հարկէ իր գորտուր գրով:
Ապա Յովհաննու վարքի տէրութիւն... նրա
գիրը քան էլ կը ճարեցնի: Այս բոլորը ժո-
ղովրդին ֆլաւում են թէ նիւթականապէս, թէ
բարոյապէս, բայց այս ժողովրդի մեծ մասն
դեռ շատ քիչն են կուտում:

Զը պէտք է մոռնալ «Առողջապահիկ թիւ-
թի» կատարած օգուտները, սակայն գիւղե-
րում թէ և այդ թիւթը ստացվում է, բայց մեղ
ցանկալի նպատակին այնքան էլ չէ հասցնում,
չնորհիւ ժողովրդի մի մասի անգործութեան
թեան, իսկ եթէ լինում են կարգացողներ,
նրանք էլ մեծ մասամբ շատ քիչ բան են հա-
կանում: Միայն շատ գիւղերում այժմ կան
կրթված երիտասարդներ, մասնաւոր ամառը
լաւ կը լինէր, եթէ այդ պարոնները հաւաքէին
ժողովրդից մարդիկ և նրանց համար կարգա-
յին ու բացատրէին, այն ժամանակ, թէ թիւ-
թը իր նպատակին կը հասնէր և թէ նրանք
մասնակից կը լինէին ժողովրդին օգնելու վը-
սեմ գործին:

Փ. Ե.

ՆԱՄԱԿ ԿՈՂԻՑ

Յուլիսի 28-ին

Ինչպէս Կովկասի գնապահ տեղերում, նոյն-
պէս և մեղ մօտ օր-օրի վրա սպասում են ան-
կոչ հիւրերն—խօսերային. գեղացիները, երբ

մտաբերում են 1892 թւականին տուած խօ-
ւերայի դոհերին, որոնց թիւը միայն Կողբի
նման գիւղում երեք հարիւր էր հասնում—
սարսափահար են լինում, որովհետեւ, մօտ
200,000 բնակիչ ունեցող Սուրբաշուի գաւա-
ռը կառավարվում է մի գեղատնով, մի հի-
ւանդանոցով և երկու բժիշկներով: Բժիշկներն
էլ այնքան հեռու են գտնվում խօսերայի մա-
սին գիտակցութիւնից զուրկ խաւար ամբո-
ւից, որ հիւանդութիւնը գաւառի մի քանի
մասերում սուր կերպարանք ստանալուց, հա-
ղել թէ կարողանան դէժ մասնաւոր օգնու-
թիւն հասցնել իրանցից տանտեղ վերստեղ
հեռու ապրողներին:

Այժմ, որ խօսերան անթիւ դոհեր է խլում
Պարսկաստանից, ամենից առաջ պէտք է հոգ
տանել Երևանի հիւանդանոցի հիւանդանոց
պայմանները բարելաւելու, որովհետեւ, չնորհիւ
Երևանից Ջուլֆա տանող պարսկական գծի
մեծաքանակ ապրանքների տեղափոխութեան
և մարդկանց երթևեկութեան, կարող է ամենից
առաջ խօսերան մօտը գործել Երևան:

Սուրբաշուի մի սահմանից մի այլ սահման
անցնելու ամենավտանգաւոր տեղն էլ հանդի-
սանում է մաքսանիւնդների ճանապարհները,
որտեղից օրական տասնեակ մարդիկ կառա-
վարութեան աշխուրջ հսկողութիւնից խու-
սափելով, վարակիչ ախտը բերում են տարա-
ձեւու աղիտութեան պատճառով առողջապա-
հական պայմաններից զուրկ գեղացիներին
մէջ և անթիւ, անհամար աշխատող ձեռքեր
զրկում իրանց ընտանիքից:

Լաւ կը լինէր, եթէ տեղական վարչական
մարմինները աւելի խիստ միջոցներ ձեռնար-
կէին խօսերայի առաջն առնելու, կամ թէ՛ եթէ
այդ անհարկն է, շտապէին գիւղական շը-
ջաններում շուտով տարածել խօսերայի վերա-
բերալ բրօշիւները, բժշկական գիտելիքներ,
և ժամանակաւորապէս հիմնէին փոքրիկ շըշիկ
գիւղատներ, որով հնարաւորութիւն տուած կը
լինէին գաւառի ձեռնհաս երիտասարդներին
գէթ մասնաւոր չափերով հիւանդութեան ըսկը-
բնական շըջանում օգնութիւն հասցնել հի-
ւանդ գեղացիներին:

Կ. Գ.

ՆԱՄԱԿ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հաղոր-
դում է, որ Մօսկվայի համալսարանում քաղվել
է մի թոշակաւորի տեղ Ա. Ա. Ամիրովի ա-
նունով՝ Թիֆլիսիցի մանսաղքատ մի ուսա-
նողի համար, առանց կօնի և աղքատութեան
խտրութեան, սեպտեմբերին քաղաքային խոր-
հուրդը կը քուէարկէ և կողոշէ, թէ ում
յաւակցանալ այդ թոշակը:

Պետերբուրգից հեռագրում են «Kas.»-ին,
որ 20-դ հետեակ զիվիդիայի հրամանատար
գեներալ Լէյտենանտ Ֆլէշչէնը նշանակվում է
Հեռաւոր Արեւելքում Նորին Մեծութեան փո-
խարքայ գեներալ-ադիւտանտ Ալեքսէյով տրա-
մադրութեան տակ:

Մի գիւղատնտես, Ե. Ի. Շուէյն առաջարկել
էր Կովկասի ֆիլօսօֆային յանձնաժողովին,
որ ինքը միջոց է գտել ֆիլօսօֆային դէմ, ա-
ռանց յայտնելու թէ ինչու է կայանում այդ
միջոցը: Այժմ յանձնաժողովը հարցումն է արել
գրաւաւոր գիւտատէրին, թէ ինչ ճանապար-
հով կարող է ծանօթանալ պարոնի գտած մի-
ջոցի հետ:

Անցեալ օրը, օգոստոսի 11-ին, 10-դ քաղա-
քաւարի անսխալական խումբը բժիշկ Ֆեո-
դօրովի մասնակցութեամբ, ի մէջի այլոց՝ սա-
նիտարական վերահսկողութիւն կատարեց
Անդրկովկասեան երկաթուղու ծառայողների
պառոտական ընկերութեան նախաօվկա թա-
ղի խանութում: Գնութիւնը ցոյց է տուեց,
որ այդ խանութը ծախում է սղքատ ծառա-
յողներին ամեն տեսակ փթած, հոտած ու
նեխված ապրանքներ: Գնակցին այդ կեղտոտ
պահվող խանութում հետեւալ ապրանքները.
հոտած սիւրճափայտներ, որ մի տեսակ խառ-
նակ ու հոտած խմորի տեսք էին ստացել,
150 հատ «տարան» կոչված ձուկից՝ որդերով
ծածկված, թէյի համար «պէշկերի» որդերով
լցված, փթած ֆիստալ, որթնալից սուշիկեր,
որթնալից պանիր, մի փոքրիկ տակաւ կրու-
պա, որի մէջ վրտում էին որդերը, և այլն,
և այլն: Այդ բոլորի համար արձանագրութիւն
է կազմվել իսկոյն և եթ, որպէս զի ընկերու-
թեան վարչութիւնը ի դիմաց իր նախագահի
պատասխանատուութեան երթալով «Տարան»
ձուկն իսկոյն կրակի մէջ լցրին, իսկ մնացած-

ները կըրեցին իբր ապացոյց այդ ընկերու-
թեան քաղաքագործութեան: Երբ անհատներն
են այդպիսի զրուկի կեղծաբարութեան դի-
մում, դեռ նրանց քայլը հասկանալի է... Ինչ
ասել հապա ամբողջ ընկերութիւններին:

ՇՈՒՇՈՒՑ մեղ գրում են. «Յուլիսի 30-ին
հայոց դերասանական խումբը ղեկավարու-
թեամբ Յ. Արեւիկայի, ներկայացրեց Իսաէնի
3 գործողութեամբ «Ուրուականներ» դրամա:
Ի հարկէ մեր դերասանները իրանց խաղով
չը ցնցեցին հասարակութեան, մասնաւոր ուր
վերջիններս մէջ շատերը չէին էլ հասկա-
նում Օսկուրի և նրա մօր տանջանքները,
հետեւապէս և ամբողջ դրաման չըբռնեցին:
Բոլոր դերակատարներն էլ լաւ էին համարեալ:
Ամսիս 3-ին, օր. Սիթարեանի բենեֆիսին
ներկայացրին Իսաէնի «Նորա» 3 գործողու-
թեամբ դրաման: Օրիորդի խաղը, Նօրայի
դերում, կարելի էր լաւ համարել: Միւս գե-
րակատարները բոլորն էլ լաւ էին: Բենեֆի-
ցիանտ օրիորդին մատուցին մի բնծայ և ծաղ-
կեայ դիշեր: Ամսիս 4-ին, դարձեալ կայացաւ
«Մանկական տուն», քաղաքացած սովորական
պարերից, «Աւի տղ սպիտակ» վոզըվիլից և
կենդանի պատկերներից երեխաների համար,
իսկ հասակաւորներին—«Բարեգործութիւն» վո-
զըվիլը ուսեղին լեզուով: Ումբը խոստա-
նում է ամեն չորեքշաբթի օր այսպիսի «տո-
ներ» սարբել: Մոռացանք յիշել, որ ամեն ան-
գամ երեխաներին քաղցրեղէն կամ խաղալիք
են բաժանում:

ԳՕՐՈՒՑ մեղ գրում են. «Մասիս 1895
թւից, երբ Լախա գետի ալիքներին դո՛ գնաց
մեր միակ փոքրիկ քաղաքային այգին, մենք
գօրեցինք, մնացինք առանց զօսատեղի,
ուր կարողանայինք ազատ ժամանակներս ա-
զատվել մեր փողոցների փոշիները կուլ տա-
լուց: Կորցնելով այդ միակ զօսատեղին, մենք
յոյսներս դրել ենք մեր քաղաքային վարչու-
թեան վրա, որ նա ամեն միջոց գործ կը դնէ
և մէկ զօսատեղի կը շինէ մեղ համար, բայց
իդուր. մեր քաղաքային վարչութիւնը, ինչպէս
ուրիշ շատ գործերում, այնպէս էլ ներկայ
հանգամանքում անուշադիր մնաց: Հասարա-
կութիւնն էլ, տեսնելով քաղաքային վարչու-
թեան անտարբերութիւնը, վճռեց իր դարդին
ինքը դարձան անկ. այսինքն կամաւոր շուր-
քատութիւններ ժողովել և հասարակութեան
աջակցութեամբ Կուր գետի և Լախայի ա-
փերին մի անգին տարածութեան վրա մի
զօսատեղի շինել: Կարգադրիչ ունենալով Ե-
րիտասարդ օֆիցեր Էնգելմանին, ամբողջ հա-
սարակութիւնը, սկսած վերջին մշակից մինչև
բարձրաստիճան անձնաւորութիւնները, ձեռք
ձեռքի տուած համաբաշխութեամբ աշխատում
են. երկու ամսից աւելի է անցն օր ամբողջ
տուում են հերթով օրական 100—150 մարդ
արհեստաւորների համաքանները, վաճառակա-
նները, գործակատարները, տատիճաւաւորները,
ուսումնարանների աշակերտները, աշակեր-
տներինը, զինապետները, ուսանողները
զինուորային: Եւ ան կիրակի, օգոստոսի 8-ին,
առաւօտեան ժամը 11-ին, կատարվեց նոր
զօսատեղիի օրհնութեան հանդէսը: Այդին
անուանեցին «Ամրակալութիւն» գեներալ
ադիւտանտ Ամրակալութիւն անունով, որը իր
կողմից ոչ մի միջոց չը խնայեց այս բարի
գործի համար: Երեկոյեան նշանակված էր ա-
ռաջին զօսանքը. մուտքը 10—20 կօպէկ,
որից գոյացաւ 200 ըուրլը: Հասարակութեան
ուրախութեանը չափ չը կար, նուազում էին
զինուորական օրիւնտրը և սպանդար, կար և
հրավորութիւն: Ժամի 12-ն էր գառել հասա-
րակութիւնը չէր ստան հեռանալ այդուց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԻՍԻՒՐԻՆ

ՊԵՏԻՍԻՍԻՍ ԵՆՈՐԶԷ

Գեներալ Կուրօպսկիին լիազօրութիւններ
վերջերս եւրօպական մամուլի մէջ լուրեր էին
տարածվում, թէ Մանչուրիայի ուսուց գործի
ընդհանուր հրամանատար գեներալ Կուրօպսկի-
նը չուէր գործողութեան լիազօրութեամբ աղա-
տութիւն, այլ հրահանգներ է ստանում Պե-
տերբուրգից: «Berl. Tageblatt» լրագրի Պե-
տերբուրգի թղթակիցը հաղորդում է, թէ հա-
կառակ ֆրանսիական մամուլի մի քանի օր-
գանների հաստատութեան, զինուոր Կուր-
պսկինը ոչ մի հրահանգ չէ ստանում Պե-
տերբուրգից և նրան տրված է գործողութեան
լիազօրութեամբ ազատութիւն:

Պօրտ-Արտուրի Եսկալաւն: Օգոստոսի 1-ին
Պօրտ-Արտուրից մեկնած չինացիներ խօսքով:

